ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7

ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

20.05. 2016թ.Ք. Իջևան

Նախագահ Ն. Խուդավերդյան
Քարտուղար Ա. Սարիբեկյան

Խորհրդի նիստին մասնակցում էին նախագահ Ն. Խուդավերդյանը, քարտուղար Ա. Սարիբեկյանը, Հ. Մարզպանյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Պ Ասիլբեկյանը, Գ. Ավետիսյանը, Գ. Սիրոյանը, Հ. Ազիզյանը, Մ. Սարուխանյանը, Լ. Մելիքջանյանը, Վ. Առաքելյանը, ուս. խորհրդի նախագահ Հ. Քարտաշյանը, ՈՒԳԸ նախագահ Ս. Հակոբյանը, Ս. Սաֆարյանը և Ն. Մխիթարյանը:

Ֆակուլտետի խորհրդի նախագահ Ն. Խուդավերդյանը բացելով ֆակուլտետի խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և ներկայացրեց օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների ամբիոնային ծանրաբեռնվածությունների քննարկման և հաստատման մասին:
/Զեկ. Ն. Խուդավերդյան/
2.Լսել ֆակուլտետի ՈՒԽ –ի ՈՒԳԸ նախագահների հաշվետվությունները համապատասխան կառույցների գործունեության վերաբերյալ:
/Հ. Քարտաշյան, Ս. Հակոբյան /

Ֆակուլտետի խորհրդի անդամների կողմից բաց քվեարկությամբ միաձայն ընդունվեց նիստի օրակարգը:

1.Լսեցին - Ն. Խուդավերդյանին

Նա նշեց, որ ֆակուլտետի գիտխորհուրդ են ներկայացվել «Ընդհանուր տնտեսագիտության» և «Տուրիզմի կառարվարման և մշակութաբանության» ամբիոնների ամբիոնային ծանրաբեռնվածությունները, որոնք քննարկվել են համապատասխան ամբիոններերում:

Արտահայտվեցին - Հ. Մարզպանյանը, Գ. Հովհաննիսյանը

Որոշեցին- հաստատել «Ընդհանուր տնտեսագիտության» և «Տուրիզմի կառարվարման և մշակութաբանության» ամբիոնների ամբիոնային ծանրաբեռնվածությունները:

2.Լսեցին- ֆակուլտետի ՈՒԽ-ի և ՈՒԳԸ նախագահների հաշվետվությունը համապատասխան կառույցների գործունեության վերաբերյալ

Լսեցին ՈՒԽ-ի նախագահ - Հ. Քարտաշյանին

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի ՈՒսանողական խորհուրդը իր հասարակական գործունեությունը ֆակուլտետում իրականացնում է՝ հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ Ուսանողական խորհրդի կանոնադրությունը: Մասնավորապես ֆակուլտետի ՈՒԽ –ի գործունեության նպատակներն են հանդիսանում.

•պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները,

•համալսարանի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնել ուսանողությանն առնչվող հարցերը,

•իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին,

•աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը,

•մասնակցել ֆակուլտետում ներքին կարգապահության պահպանմանը:

2016 – 2017 ուսումնական տարվա ընթացքում ՈՒսանողական խորհուրդը սերտ համագործակցել է ֆակուլտետի դեկանի, ֆակուլտետում առկա երկու մասնագիտական ամբիոնների, ինչպես նաև դեկանատի հետ: Այս ընթացքում ՈՒԽ -ն հետևել է ֆակուլտետային ներքին կարգապահության պահպանմանը, ուսանողների հաճախություններին, հետևողական է եղել քննական հարցաշարերի տրամադրման հարցում:

ՈՒԽ –ը կանանց միջազգային տոնի կապակցությամբ կազմակերպել է միջոցառում, որին մասնակցել են բոլոր կուրսերի ուսանողները և հրավիրված են եղել ֆակուլտետի կին դասախոսները:

Լսեցին - ՈՒԳԸ նախագահ Ս. Հակոբյանին

Նա նշեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերությունն իրականացրել է կանոնադրական պահանջներից բխող գործառույթներ և միջոցառումներ, աջակցել է ուսանողությանը՝ գիտական և կրթական ոլորտներում, նպաստել ուսանողների գիտական, ստեղծագործական ու հոգևոր զարգացմանը և ուսանողական առօրյայի կազմակերպմանը:

Ֆակուլտետի ՈՒԳԸ «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի վարիչ տ.գ.դ, պրոֆեսոր Հ. Մարզպանյանի, նույն ամբիոնի ասիստենտ՝ Է. Հովհաննիսյանի և ֆակուլտետի դեկան՝ Ն. Խուդավերդյանի ղեկավարությամբ կազմակերպել է ուսանողական գիտական կոնֆերանս Ծաղկաձորում: Ֆակուլտետի ուսանողների կողմից համապատասխան շնորհանդեսների ուղեկցությամբ ներկայացվել է 11 գիտական զեկուցում:

Արտահայտվեցին - Գ. Հովհաննիսյանը, Գ. Ավետիսյանը, Պ. Ասիլբեկյանը

Նրանք նշեցին, որ ֆակուլտետի ՈՒԽ -ի և ՈՒԳԸ կատարած աշխատանքները կարելի է գնահատել բավարար:

Որոշեցին - ֆակուլտետի ՈՒԽ -ի և ՈՒԳԸ կատարած աշխատանքները գնահատել բավարար:

Գիտխորհրդի նախագահ *Ն. Խուդավերդյան*

Քարտուղար *Ա. Սարիբեկյան*